ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Քնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
_____ Ս.Ամիրխանյան
« 26 » « դեկտեմբերի » 2009 թ.

ՄԵԿ ԱՆՁՐԱԳԻԾ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնական տեղեկություններ գնման մասին

1.1. Պատվիրատուի

Անվանումը ՀՀ բնապահպանության նախարարություն

Հասցեն ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք

1.2. Գնման ընթացակարգի կազմակերպման գործը համակարգող անձի

Պաշտոնը Էկոնոմիկայի վարչության Բյուջետային ծրագրավորման և գնումների գործընթացի համակարգման բաժնի պետ

Անունը, ազգանունը Ռոման Չոբանյան

Հեռախոսը /աշխ/ 56-75-35 Ֆաքսը _____ Էլ. փոստի հասցեն_____

1.3. Գնման առարկայի տեսակը

ապրանք [ ] աշխատանք [ ] ծառայություն [X]

1.4 Կարիքի բավարարման միջոցը

գնում [X] վարձակալություն [ ] լիզինգ [ ]

1.5. Գնման առարկայի համառոտ նկարագիրը «Կարմիր գրքի հրատարակման և տպագրման ծառայություններ»

1.6. Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձի

Անվանումը (անունը, ազգանունը) «Զանգակ-97» ՍՊԸ, տնօրենի Ս.Մկրտչյան

Հասցեն ք. Երևան, Ն.Նորքի 8-րդ զ-ծ 30/39

Հեռախոսը /աշխ/ (+37410) 23-25-28 Ֆաքսը _____ Էլ. փոստի հասցեն_____

1.7. Կնքված գնման պայմանագրի (կցվում է)

Ծածկագիրը № ՀՀ ԲՆ-ԾՁԲ - 09/30

Կնքման ամսաթիվը « 26 » դեկտեմբերի 2009թ.

Գործողության ժամկետը՝ Կողմերի մինչև պարտավորությունների լրիվ կատարումը

Գինը 11 000 000 (տասնմեկ միլիոն) ՀՀ դրամ

1.8. Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե 2009 թվական

Բաժին	05	Խումբ	04	Դաս	01	Ծրագիր	09
	05		06		01		22

Նախարարություն (գերատեսչություն)՝ 104006 Հոդված 4234

1.9. Գնումների պաշտոնական տեղեկագրում կնքված պայմանագրի մասին տեղեկատվություն հրապարակելու նպատակով պատվիրատուն լիազոր մարմնին ներկայացրե՞լ է պահանջվող տեղեկատվության տեքստը (կցվում է)

Այո [X] Ոչ [ ]

Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը _____

2. Գնման գործընթացի նախապատրաստումը

2.1. Գնման պահանջի ծագման

Իրավական հիմքը Գնման բնութագրերի վերահաստատման օրը
Օրը՝ ամսաթիվը « 25 » դեկտեմբերի 2009թ.

2.2. Պատվիրատուի ղեկավարը սահմանել է՝

Պատասխանատու ստորաբաժանում [X] Տեխնիկական հսկողության հանձնաժողով [ ]

Անվանումը Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն

Իրավասությունը վերապահելու հիմքը ՀՀ բնապահպանության նախարարի դի « 30 » դեկտեմբերի 2008 թվ. № 477-Ա հրաման

Ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը Շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Գաբրիելյան

Հեռախոսը /աշխ/ (+37410) 58-53-26 Ֆաքսը _____ Էլ. փոստի հասցեն_____

2.3. Մեկ անձից գնման ձևի կիրառման պայմանն ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համապատասխան կետի՝

- արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը՝ ժամկետի առումով անհնար է, պայմանով որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել, ինչպես նաև եթե գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում.

2.4. Մեկ անձից գնման ձևի կիրառման ընտրված պայմանի հիմնավորումը Կարմիր գրքի հրատարակման և տպագրման համար հայտարարված ՊԳԳ-ԳՀԱՇՁԲ-09/38 ծածկագրով գնանշման հարցումը 05.11.2009թ. հայտարարվել է չկայացած: Գնանշման հարցմանը մասնակցության հայտ էին վերցրել չորս կազմակերպություններ, սակայն նրանցից ոչ ոք չէր ներկայացել: Հետագա շուկայական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նախատեսված գումարով հնարավոր չէ ձեռք բերել այդ ծառայությունները: ՀՀ բնապահպանության նախարարությունը բազմաթիվ բանակցություններ է վարել տարբեր միջազգային բնապահպանական կազմակերպությունների հետ Կարմիր գրքի հրատարակման և տպագրման լրացուցիչ ֆինանսավորման համար: Բանակցությունների արդյունքում «Վայրի բնության համաշխարհային հիմնադրամ»-ը (WWF) համաձայնել է աջակցել և համաֆինանսավորել Կարմիր գրքի հրատարակման և տպագրման ծառայությունները՝ 5.0 մլն դրամի չափով և այդ հիմքով վերանայվել են գնման բնութագրերը: Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման արդյունքում վերանայվել են գնման առարկայի բնութագրերը և վերահաստատվել են 25.12.2009թ.: Քանի որ գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթի արդյունքներով կնքված պայմանագրերում, ինչպես նաև գնման այլ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է, ուստի գնման ընթացակարգը կազմակերպվել է մեկ անձից գնման ձևով:

3. Գնման պայմանագրի կնքումը

3.1. Գնման պայմանագիրը կնքելու նպատակով պատվիրատուի առաջարկը ներակայացնելու միջոցը՝ մեկ անձին պայմանագիր կնքելու առաջարկի ներկայացում

3.2. Գնման պայմանագիրը կնքելու նպատակով առաջարկը ներկայացնելու միջոցի ընտրության հիմնավորումը-

3.3. Տեղեկություններ այն անձանց (անձի) մասին որոնց ուղարկվել է պատվիրատուի առաջարկը.

N	Անվանումը (անուն, ազգանունը)	Հասցեն	Ներկայացված առաջարկի հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը (կցվում է)
1.	«Զանգակ-97» ՍՊԸ	ք. Երևան, Ն.Նորքի 8-րդ գ-ծ 30/39	26.12.2009 թվ. թիվ 5/11.1/1780-09

Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը _____

3.4. Տեղեկություններ պատվիրատուի առաջարկը ընդունած անձանց վերաբերյալ.

N	Անվանումը (անուն, ազգանունը)	Հասցեն	Առաջարկը ընդունելու հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը (կցվում է)
1.	«Զանգակ-97» ՍՊԸ	ք. Երևան, Ն.Նորքի 8-րդ գ-ծ 30/39	26.12.2009 մտից թիվ 5-1323

3.5. Տեղեկություններ պատվիրատուի կողմից մերժված առաջարկությունների վերաբերյալ.

Մերժե՞լ է Պատվիրատուն որևէ առաջարկ՝ այն պայմանագրի կնքման նպատակով մասնակցին ուղարկված գրությամբ սահմանված կարգի խախտմամբ ներկայացված լինելու պատճառով.

Այո [ ] Ոչ [X]

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել գնումներին մասնակցության իր իրավունքը.

Այո [ ] Ոչ [X]

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել որակավորման իր տվյալները.

Այո [ ] Ոչ [X]

3.6. Բանակցություններ

Պատվիրատուն վարե՞լ է բանակցություններ.

Այո [ ] Ոչ [X]

4. Կասեցում

Կասեցրե՞լ է պատվիարատուն գնման գործընթացը.

Այո [ ] Ոչ [X]

5. Բողոքարկում

Ստացե՞լ է պատվիրատուն գնման գործընթացի հետ կապված որևէ բողոք.

Այո [ ] Ոչ [X]

Բողոքարկվե՞լ են պատվիրատուի գործողությունները լիազոր մարմնին.

Այո [ ] Ոչ [X]

6. Գնման ընթացակարգի արձանագրության վարման պատասխանատու անձի

Անունը, ազգանունը <u>Ռոման Չոբանյան</u>

Պաշտոնը <u>Էկոնոմիկայի վարչության Բյուջետային ծրագրավորման և գնումների գործընթացի համակարգման բաժնի պետ</u>

Հեռախոսը /աշխ/ <u>56-75-35</u> **Ֆաքսը** _____ **Էլ. փոստի հասցեն**_____

Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը _____

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿՆՔՎԱԾ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

(Հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն)

2009 թվականի դեկտեմբերի 26-ին պատվիրատու՝ ՀՀ բնապահպանության նախարարություն, որը գտնվում է ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք հասցեում և կատարող՝ «Զանգակ-97» ՍՊԸ -ը, որը գտնվում է ք.Երևան, Ն.Նորքի 8-րդ զ-ծ 30/39 հասցեում, միջև կնքվել է Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում պետության կարիքների համար է Կարմիր գրքի հրատարակման և տպագրման ծառայությունները:

Պայմանագրի գինը կազմում է 11 000 000 (տասնմեկ միլիոն) ՀՀ դրամ:

Գնումները կատարվում են՝ պետության կարիքների համար Կարմիր գրքի հրատարակման և տպագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մեկ անձից՝ գնումներ կատարելու ձևով:

ՀՀ բնապահպանության նախարարություն

ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Ս. Ամիրխանյան

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՀՀ ԲՆ - ԾՁԲ - 09/30

ք. Երևան *«26» «դեկտեմբերի»2009թ.*

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Ս.Ամիրխանյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **«Պատվիրատու»**, մի կողմից, և **«Զանգակ-97» ՍՊԸ-ը**, ի դեմս տնօրեն **Ս.Մկրտչյանի**, որը գործում է «Զանգակ-97» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **«Կատարող»**, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել **Կարմիր գրքի հրատարակման և տպագրման ծառայությունները** (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայության արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցվում են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված №1-ով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխան:

1.3. Ծառայությունների մատուցման ժամկետը սահմանվում է մինչև 2010 թվականի փետրվարի 9-ը: Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված №2-ով սահմանված գնման ժամանակացույցով: Սույն պայմանագրում նշված՝ ծառայությունների մատուցման ժամկետները կարող են փոփոխվել Կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Կատարողի միջոցներով Ծառայությունները մատուցումը

2.1. Ծառայությունը մատուցվում է Կատարողի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2. Կատարողը պատասխանատվություն է կրում իր կողմից մատուցված Ծառայությունների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. **Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի մատուցած Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2. Կատարողի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ գնման ժամանակացույցի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ծառայությունների մատուցման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը:

3.1.3. Չընդունել մատուցված Ծառայությունների արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.4 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4. Մինչև Ծառայությունների արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ Կատարողին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը մատուցված Ծառայություններին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները՝ առնվազն 10 օր առաջ տեղեկացնելով այդ մասին Կատարողին.

3.1.5. Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կատարողը ժամանակին չի սկսում Ծառայությունների մատուցումը կամ Ծառայությունը մատուցում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կատարողը երկու և ավելի անգամ խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ գնման ժամանակացույցը),

գ) Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին,

դ) Կատարողի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Ծառայությունների մատուցման ապահովման համար սահմանված ժամկետները.

3.1.6. Առանց մատուցված Ծառայությունների դիմաց վճարելու, պահանջել լուծելու սույն պայմանագիրը, եթե Կատարողից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է Ծառայության մատուցման այնպիսի պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները.

3.1.7. Մատուցված Ծառայությունների արդյունքում թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել, եթե դրանք հայտնաբերվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 722 հոդվածով սահմանված երաշխիքային ժամկետում:

3.1.8. Ծառայությունների մատուցման արդյունքում, այն ընդունելուց հետո՝ 1 (մեկ) տարվա ընթացքում, թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ վերադարձնելու Ծառայությունների մատուցման համար վճարված գնի մասը կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը.

3.1.9. Մինչև Պատվիրատուի կողմից Կատարողի մատուցած Ծառայությունների արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Ծառայությունների արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում՝ հատուցելով Կատարողի կատարած ծախսերը:

3.1.10. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով, գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի (կապալառուի, մատակարարի) համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1. Ծառայությունները մատուցելիս՝ աջակցել Կատարողին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2. Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կատարողի մասնակցությամբ զննել և ընդունել մատուցված Ծառայությունները (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Ծառայությունների արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Ծառայությունների արդյունքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին.

3.2.3. Սույն պայմանագրով նախատեսված կարգով Ծառայությունների արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.3. Կատարողն իրավունք ունի՝

3.3.1. Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Ծառայությունների արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2. Մինչև Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին հանձնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը մատուցված Ծառայությունների համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված դեպքերի:

3.3.3. Մինչև Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին հանձնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ առնվազն 10 օր առաջ այդ մասին տեղեկացնելով Պատվիրատուին:

3.3.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.5 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը, իսկ չկատարելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները:

3.4. Կատարողը պարտավոր է՝

3.4.1. Ծառայությունները մատուցել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ տեխնիկական բնութագրերին համապատասխան:

3.4.2. Կատարել Ծառայությունների մատուցման վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3. Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ գնման ժամանակացույցը) խախտելու և Պատվիրատուի կողմից Ծառայությունների մատուցման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Ծառայությունների մատուցումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.4. Սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

4. Ծառայությունների հանձնման և ընդունման կարգը

4.1. Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից Ծառայությունների մատուցման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված ժամանակացույցով: Ծառայությունների ընդունումն իրականացվում է Կատարողի կողմից ներկայացվող, սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող № 4 Հավելվածով նախատեսված Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրության, ինչպես նաև տեխնիկական բնութագրով նախատեսված այլ փաստաթղթերի հիման վրա:

4.1.1. Ծառայությունների մատուցման պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում այդ Ծառայությունների մատուցման մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

4.2. Պատվիրատուն մատուցված Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշվետու այլ փաստաթղթերն ստանալու պահից 40 օրվա ընթացքում Կատարողին է ուղարկում հանձնման-ընդունման՝ ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ դրա պատճառաբանված մերժումը:

4.3. Կատարողի կողմից սույն պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետներում մատուցված Ծառայությունները Պատվիրատուի կողմից ընդունված են համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4.4. Մատուցված ծառայությունները հիմնական ցուցանիշներին կամ տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ մատուցման ենթակա լրացուցիչ Ծառայությունները և ժամկետները: Կատարողը պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, մատուցել անհրաժեշտ Ծառայությունները:

4.5. Եթե մատուցված Ծառայությունների ընդունման ժամանակ պարզվի, որ անհրաժեշտ է, ի տարբերություն ծառայությունների սկզբնական հիմնական ցուցանիշների, լրամշակել կամ փոփոխել Ծառայությունների առանձին պայմանները, ապա այդ ծառայությունները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով՝ նշելով դրանց կատարման ժամկետը և արժեքը:

5. Ծառայության գինը և վարձատրությունը

5.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 11 000 000 (տասնմեկ միլիոն) ՀՀ դրամ: Ծառայությունների մատուցման գինը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարները, ինչպես նաև կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1. Պատվիրատուն պայմանագիրը կնքելու պահից 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար պայմանագրային գնի 54.55 տոկոսը՝ 6 000 000 (վեց միլիոն) ՀՀ դրամ (բյուջետային միջոցներ), որը հաշվարկվում է ծառայությունների ընդհանուր գնի մեջ և մարվում է մինչև նախատեսվող ծառայությունների ավարտը:

5.2. Մատուցված ծառայությունների դիմաց Պատվիրատուն վճարում է սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով ընդունելու դեպքում, պայմանով, եթե Ծառայությունները մատուցված են պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.3. Ծառայությունների գինը սահմանված է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող № 2 հավելվածում: Ծառայությունների գինը կայուն է և Կատարողը իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.4. Սույն պայմանագրի կատարման արդյունքում Կատարողի ստացած խնայողությունը բաշխվում է Կողմերի միջև՝ հավասարաչափ:

5.5. Պատվիրատուն սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով Ծառայություններն ընդունելու դեպքում վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է սույն պայմանագրի հավելված 4-ի՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված 3-ով նախատեսված ամսում:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ գնման ժամանակացույցը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2. Կատարողի կողմից սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետի (ներառյալ գնման ժամանակացույցը) խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայությունների՝ ներառյալ առանձին փուլերի, արժեքի 0,05%-ի չափով:

6.3. Սույն պայմանագրի 6.2 և 6.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայությունների մատուցման արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

6.4. Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունները չընդունվելու դեպքում՝ Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,05%-ի չափով:

6.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.5 կետերով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

6.6. Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

6.8. Պատվիրատուն լիակատար նյութական պատասխանատվություն է կրում Կատարողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումով ցանկացած երրորդ կողմի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ այլ օրենքներով նախատեսված իրավունքների խախտում տեղի ունենալու դեպքում խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ Կատարողի կատարած ծախսերի փոխհատուցման և Կատարողի բարի համբավին ու գործարար հեղինակությանը հասցված վնասի փոխհատուցման համար:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը:

8.2. Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3. Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.5. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.6. Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք՝ ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի № № 1, 2, 3 և 4 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Զանգակ-97» ՍՊԸ**
ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ք. Երևան, Ն.Նորքի 8-րդ զ-ծ 30/39 «Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
ՀՀ 900011007839 900013007019 ՀՎՀՀ 02507198	ՀՀ 217001040013001 ՀՎՀՀ 00830786
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար	«Զանգակ-97» ՍՊԸ-ի տնօրեն
Ս.Միրխանյան	**Մ.Մկրտչյան**
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված № 1
«26» « դեկտեմբերի » 2009թ. կնքված
№ ՀՀ ԲՆ-ԾՁԲ - 09/30 պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Զանգակ-97» ՍՊԸ**
ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ք. Երևան, Ն.Նորքի 8-րդ զ-ծ 30/39 «Էյչ էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
ՀՀ 900011007839 900013007019 ՀՎՀՀ 02507198	ՀՀ 217001040013001 ՀՎՀՀ 00830786
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար	«Զանգակ-97» ՍՊԸ-ի տնօրեն
Ս. Անդրեասյան	Ս.Սկրտչյան
---------------------- (ստորագրություն)	---------------------- (ստորագրություն) Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. Գնման առարկան՝ ծառայության անվանումը	**Կարմիր գրքի հրատարակման և տպագրման ծառայություններ**
2. Գնման առարկայի՝ ծառայության մանրամասն նկարագիրը	1. Գրքի առաջին հատոր • էջերի քանակ՝ 352 (երեք հարյուր հիսուներկու) էջ • Էջերի թուղթը՝ 135 գ/մ2 կավճապատ • տպաքանակ՝ 500 (հինգ հարյուր) օրինակ • չափսը՝ A4, 60X84/8 • կազմը՝ կոշտ կազմ, լիդերինապատ, ոսկեզօծ դաճվացքով, 1500գ/մ2 ստվարաթղթով • տպագրությունը՝ գունավոր: 2. Գրքի երկրորդ հատոր • էջերի քանակ՝ 312 (երեք հարյուր տասներկու) էջ • Էջերի թուղթը՝ 135 գ/մ2 կավճապատ • տպաքանակ՝ 500 (հինգ հարյուր) օրինակ • չափսը՝ A4, 60X84/8 • կազմը՝ կոշտ կազմ, լիդերինապատ, ոսկեզօծ դաճվացքով, 1500գ/մ2 ստվարաթղթով • Տպագրությունը՝ գունավոր:
3. Գնման առարկայի՝ ծառայությունը մատուցողին ներկայացվող և անհրաժեշտ պահանջները կամ պայմանները	Տեխնիկական բնութագրի 2-րդ կետով սահմանված պայմանների թույլատրելի շեղումը ոչ ավելի քան հինգ տոկոս:
4. Աշխատանքի կամ ծառայության մատուցման վայրը	0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական 3-րդ տուն

Հավելված № 2
«26» «դեկտեմբերի» 2009թ. կնքված
№ ՀՀ ԲՆ-ԾՁԲ - 09/30 պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Զանգակ-97» ՍՊԸ**
ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ք. Երևան, Ն.Նորքի 8-րդ զ-ծ 30/39 «Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
ՀՀ 900011007839 900013007019	ՀՀ 217001040013001
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 00830786
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար	«Զանգակ-97» ՍՊԸ-ի տնօրեն
Ս.Ամիրխանյան	Ս.Մկրտչյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

h/h	Գնման առարկայի՝ աշխատանքի կամ ծառայության անվանումը	Չափման միավորը	Միավորի նախահաշվային գինը	Նախատեսվում է գնել 2009 թվականին		Ընդամենը	
				մինչև փետրվարի 9-ը			
				քանակը	գինը	քանակը	գինը
1	Կարմիր գրքի հրատարակման և տպագրման ծառայություններ	հատ	22.000	500	11000.0	500	11000.0
	ԸՆԴԱՄԵՆԸ			500	11000.0	500	11000.0

Հավելված № 3
«26» « դեկտեմբերի » 2009թ. կնքված
№ ՀՀ ԲՆ-ԾՁԲ - 09/30 պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Զանգակ-97» ՍՊԸ**
ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ք. Երևան, Ն.Նորքի 8-րդ զ-ծ 30/39 «Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
900011007839 900013007019 02507198 ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար **Ա. Ամիրխանյան** ---------- (ստորագրություն) Կ.Տ.	ՀՀ 217001040013001 ՀՎՀՀ 00830786 «Զանգակ-97» ՍՊԸ-ի տնօրեն **Մ.Մկրտչյան** ---------- (ստորագրություն) Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

h/h	Ձեռքբերվող ծառայության անվանումը	Ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեից, ընդ որում՝ (ըստ ամիսների աճողական կարգով) 900011007839 հաշվեհամարից												Ընդամենը
		I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	**Կարմիր գրքի հրատարակման և տպագրման ծառայություններ**	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	6000.0	6000.0
		Ֆինանսավորումը 2010 թ. ընթացքում՝ «Բնապահպանական նպատակային ֆոնդ» արտաբյուջետային հաշվի միջոցներից, ընդ որում՝ (ըստ ամիսների աճողական կարգով) 900013007019 հաշվեհամարից												
		-	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	6000.0	11000.0	11000.0	11000.0	11000.0	11000.0	11000.0	11000.0	11000.0	11000.0	11000.0	11000.0	11000.0

Հավելված № 4
«26» «դեկտեմբերի» 2009թ. կնքված
№ ՀՀ ԲՆ-ԾՁԲ - 09/30 պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Զանգակ-97» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք. Երևան, Ն.Նորքի 8-րդ գ-ծ 30/39
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
ՀՀ 900011007839	ՀՀ 217001040013001
900013007019	
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 00830786

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն №

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «_____» 2009թ.

Պայմանագրի անվանումը՝ Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «26» «դեկտեմբերի» 2009թ.
Պայմանագրի համարը՝№ ՀՀ ԲՆ - ԾՁԲ - 09/30

Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Ս.Ամիրխանյանի և Կատարողը՝ ի դեմս «Զանգակ-97» ՍՊԸ-ի տնօրեն Ս.Մկրտչյանի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «____» « » 2009թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) № ___ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ ծառայություններ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարող «___» «_____» 2009թ.-ից «___» «_____» 2009թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ծառայությունները.

Մատուցված ծառայությունների համառոտ նկարագիրը	*Մատուցված ծառայությունների քանակական ցուցանիշները*	*Ծառայությունների մատուցման ժամկետը*	*Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)*	*Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի)*
Ընդամենը				

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

ՀԱՆՁՆԵՑ	ԸՆԴՈՒՆԵՑ
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
ազգանուն _____	ազգանուն _____
Կ. Տ.	Կ. Տ.

ԶԱՆԳԱԿ-97

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ZANGAK-97

PUBLISHING HOUSE

ՀՀ Երևան 0051, Կոմիտասի 49/2
Էլ. փոստ՝ info@zangak.am
Հեռ.՝ (+37410) 23-25-28, 23-26-48
Ֆաքս՝ (+37410) 23-25-95

Komitas 49/2, Yerevan 0051, Armenia
E-mail:info@zangak.am
Tel.: (+37410) 23-25-28, 23-26-48
Fax: (37410) 23-25-95

ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
պարոն Ս. Ամիրխանյանին

Ի պատասխան Ձեր 26.12.2009թ. № 5/11.1/1780-09 գրության, սույնով հավաստում ենք, որ **«Զանգակ-97» ՍՊԸ-ն**.

1. ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.
2. դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույքը արգելանքի տակ չի գտնվում.
3. կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝
   - դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
   - գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,
   - իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Զանգակ-97» ՍՊԸ-ն հայտնում է իր համաձայնությունը՝ մատուցել Ձեր վերոհիշյալ գրության մեջ նշված ծառայությունները՝ **11 000 000 (տասնմեկ միլիոն)** դրամ:

Հարգանքով՝ Մ. Մկրտչյան

«ԶԱՆԳԱԿ-97» «ЗАНГАК-97» ZANGAK-97

5-1323
26 12 2009թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
HEAD OF STAFF
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
էլ.փոստ /E-mail/ эл.почта: head_administration@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 10) 58 53 31
(374 10) 54 08 57

№ 5/11.1/1780-09
«26» «12» 2009 թ.

«Զանգակ-97» ՍՊԸ-ի
տնօրեն Ս.Մկրտչյանին
ք. Երևան, Ն.Նորքի 8-րդ զ-ծ 30/39

Հայտնում ենք, որ բնապահպանության նախարարության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Կարմիր գրքի հրատարակման և տպագրման ծառայությունները՝ ըստ պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրերի:

Առաջարկվում է Ձեզ մատուցել վերոհիշյալ ծառայությունները:

Ծառայությունների մատուցումը ֆինանսավորվելու է պետական բյուջեի հաշվին և ծառայությունների ընդհանուր գինը չի կարող գերազանցել դրանց ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Ծառայությունների մատուցման համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ «Զանգակ-97» ՍՊԸ-ը.

1. պետք է ունենա գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.
2. չպետք է դատական կարգով լինի անվճարունակ ճանաչված, չպետք է գտնվի լուծարման գործընթացում, չպետք է արգելանքի տակ ունենա պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք.
3. կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում չպետք է՝
   - դատապարտված լինի տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
   - գնման պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած լինի կեղծ տվյալներ,
   - իր գործողությամբ կամ անգործությամբ խախտած լինի գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Համաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնել սույն գրության մեջ նշված հայտարարությունը և գնային առաջարկը:

Միաժամանակ, կից ներկայացնում ենք հիշյալ ծառայությունների ձեռքբերման պայմանագրի նախագիծը:

Հարգանքով՝ Ս. Ամիրխանյան

Էկոնոմիկայի վարչության
Բյուջետային ծրագրավորման և գնումների
գործընթացի համակարգման բաժին՝ հեռ. 56 75 35